ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ-11005/ՇՕ

Քաղ. Երևան 25 10 2021 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի (այսուհետ՝ պատվիրատու), որը գործում է պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությունը, ի դեմս նախագահ Գրիգորի Երիցյանի (այսուհետ՝ կատարող), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N 165-Ա/1 հրամանը՝ (այսուհետ՝ հրաման), «Սոցիալական շտապօգնություն» ծրագրի, որի նպատակը Երևանում և Կոտայքի մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված թվով 53 ընտանիքների հրատապ աջակցության ցուցաբերումն է 15.10.2021թ.ից 31.12.2021թ. ժամանակահատվածում (այսուհետ՝ ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պատվիրատուն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կատարողին հատկացնել 1152500 (մեկ միլիոն հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, իսկ կատարողը պարտավորվում է ծրագիրն իրականացնել հրամանով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կատարողի կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կատարողի կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Հրամանով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կատարողից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կատարողը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կատարողը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պատվիրատուի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պատվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն

2.3. Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կատարողին.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պատվիրատուի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պատվիրատուին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ (այդ թվում նաև դրամաշնորհային հաշվետվություն՝ համաձայն N 2 հավելվածի), իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պատվիրատուի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.8. սույն պայմանագրի 4.1-րդ կետով սահմանված հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն ներկայացնել կատարված փաստացի ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի: Հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարների մասով կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարականներ, աշխատաժամանակի հաշվարկի թերթիկ, աշխատավարձի հաշվարկի կամ վճարման տեղեկագրեր, ճանապարհածախսերի փոխհատուցման թերթիկ և այլն:

3. Մոնիթորինգը

3.1. Պատվիրատուն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պատվիրատուի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կատարողին տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կատարողից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պատվիրատուի և կատարողի միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատրման համար նախատեսված օրը ներառյալ կատարողը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է*www.minfin.am* հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) կամ թղթային տարբերակով պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 5) և հաշվետվությունը: Ընդ որում կատարողը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է ստորագրությամբ (էլեկտրոնային դեպքում՝ էլեկտրոնային ստորագրությամբ)՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պատվիրատուն չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կամ թղթային տարբերակով կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կատարողին վճարումները կատարվում են և հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 4) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է սույն թվականի հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 6):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում

պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է իր պաշտոնական՝ www.mlsa.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պատվիրատուն այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան Կառավարական տուն 3 ՀՎՀՀ՝ 01506515 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011030690 Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան	«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-րդ փողոց ՀՎՀՀ՝ 02247522 ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ Հ/Հ՝ 163048802066 Նախագահ՝ Գրիգորի Երիցյան
(ստորագրություն) Կ.Տ.	/ստորագրություն/ Կ.Տ.

Ученик Любезнов Ученик

Учитель Лимонова Учитель

Учитель Ольгунова Учитель

Директор Ульянов Директор

Հավելված 1
20 թ. _____ ____ -ին
կնքված N ԴՏՊ-11005/ՇՕ պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Սոցիալական շտապօգնություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի N 71-Ա/1 հրամանով (այսուհետ՝ Հրաման) ստեղծված սոցիալական շտապօգնության համակարգի (այսուհետ՝ ՍՇՕՀ) նախնական գործարկումն է: ՍՇՕՀ-ի նպատակն արագ արձագանքն է արտակարգ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին, այսու-հետ՝ շահառու) սոցիալական առաջնային կարիքների բավարարման հարցում: Դրա համար պահեստներում հավաքագրվում է անհրաժեշտ ապրանքատեսականին (մթերքը), պահեստավորվում և բաշխվում	1) ներդնում է պահեստներում (այսուհետ՝ ՍՇՕՀ հենակետեր) հավաքագրված ապրանքատեսականու (մթերքի) հաշվառման համակարգը և դրա վերահսկման մեխանիզմները 2) ապահովում է հենակետ մուտքագրված ապրանքների հաշվառման մատյան (էլեկտրոնային), դրանց մուքի-ելքի առանձին արձանագրման մեխանիզմներ 3) ձևավորում է ՍՇՕՀ հենակետերի և դրանց սպասարկման տարածքների միասնական	1) հանրապետությունում ՍՇՕՀ առնվազն 1 հենակետի առկայություն 2) առևտրային կամ այլ կազմակերպությունների (բարերարների, ոլորտային ՀԿ-ների) հետ 2021 թվականի ընթացքում 1 հուշագրի կամ համաձայնագրի առկայություն 3) ՍՇՕՀ հենակետերի և այդ հենակետերում հավաքագրված ապրանքների (մթերքի) պահպանման անվտան-գության կանոններ (պիտանելիության ժամկետ և այլն) 4) Ծրագրի	31.12.2021թ.		1 152 500 (մեկ միլիոն հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ

		սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին/ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում՝ 2.5 ամսում, անհրաժեշտ է աջակցություն տրամադրել առնվազն 53 ընտանիքի/: Աշխատանքներն իրականացվում են՝ օգտագործելով ՍՇՕՀ տեղեկատվական հարթակը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նախարարության պատասխանատու ստորաբաժանման կամ միասնական սոցիալական ծառայության կամ դրա տարածքային կենտրոնների հետ համագործակցության արդյունքում փոխանակված տեղեկատվությունը:	սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՏԿ), տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության մեխանիզմներ՝ 4) կազմակերպում է Հրամանով սահմանված ակցիաները, 5) բանակցում է առևտրային կազմակերպությունների, այլ բարերարների, կամավորների հետ ֆոնդերի հայթայթման նպատակով, ձևավորում համագործակցության մեխանիզմներ՝ 6) ապահովում է ՍՇՕՀ հենակետերում հավաքագրված ապրանքատեսականու (մթերքի) տրամադրումը սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին՝ ՍՇՕՀ տեղեկատվական հարթակով ստացված տեղեկատվության կամ նախարարության պատասխանատու ստորաբաժանման կամ միասնական սոցիալական ծառայության կամ ՏԿ-ների տրամադրած հայտի հիման վրա	իրականացում առնվազն Երևան քաղաքի ողջ տարածքում և Կոտայքի մարզում. 5) համագործակցություն ծրագրի իրականացման տարածքների ՏԿ-ների հետ 6) համագործակցություն ծրագրի իրականացման տարածքի համայնքների հետ 7) իրազեկման 1 թողարկում 8) 1 ակցիայի կազմակերպում 9) ներկայացված առաջարկություններ՝ ՍՇՕՀ բարելավման կամ Հրամանի փոփոխության մասին:			

			7) իրականացնում և կազմակերպում է իրազեկման աշխատանքներ ՍՇՕՀ համակարգի գործառնության, ակցիաների կազմակերպման, կամավորների հավաքագրման, դրանց արդյունքների հարցերով՝ ապահովելով ՍՇՕՀ-ի գործառնության թափանցիկությունը. 8) իր լիազորությունների շրջանակներում շահագործում է ՍՇՕՀ տեղեկատվական հարթակը 9) համագործակցում է նախարարության պատասխանատու ստորաբաժանման, միասնական սոցիալական ծառայության և ՏԿ-ների հետ 10) ապահովում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների անվերապահ կատարումը 11) աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների լուծման, իրավական դաշտի, ինչպես նաև տեղեկատվական հարթակի բարելավման առաջարկություններ է				

			ներկայացնում նախարարություն:				
	Ընդամենը	**1 152 500 (մեկ միլիոն հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ**					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011030690
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

_____
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-րդ փողոց
ՀՎՀՀ՝ 02247522
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ
Հ/Հ՝ 163048802066
Նախագահ՝
Գրիգորի Երիցյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 2
20 թ. _____ ____ -ին
կնքված N N ԴՏՊ-11005/ՇՕ պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Սոցիալական շտապօգնություն»
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	15.10.2021-31.12.2021
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011030690
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-րդ փողոց
ՀՎՀՀ՝ 02247522
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ
Հ/Հ՝ 163048802066
Նախագահ՝
Գրիգորի Երիցյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 3
202__թ. « »« »
N ԴՏՊ-11005/ՇՕ պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<< 202__ թվականի պետական բյուջեի----------ամսում փոփոխուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա և հաստատուն ծախսերի գծով փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ

Ծախսային հոդվածներ		Հաստատված նախահաշվի գումարը		Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը	Պետական բյուջեից	Այլ միջոցներից նախատեսված	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական միջոցներ	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Այլ աղբյուրների անվանումները
1	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	**0.0**	
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	***4100***									
Էներգետիկ ծառայություններ	**4212**									
Կոմունալ ծառայություններ	**4213**									
Կապի ծառայություններ	**4214**									
Ապահովագրական ծախսեր	**4215**									

Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216									

Հանձնեց՝

Տնօրեն՝ _____ Կազմակերպություն՝ _____

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011030690
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-
րդ փողոց
ՀՎՀՀ՝ 02247522
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան
մ/ճ
Հ/Հ՝ 163048802066
Նախագահ՝
Գրիգորի Երիցյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 4
20 թ. _____ ____-ին
կնքված N ԴՏՊ-11005/ՇՕ պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999/2	Սոցիալական շտապօգնություն										192100	672300	1152500	1152500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է մինչև ֆինանսական միջոցների նախատեսումը, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011030690
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-րդ փողոց
ՀՎՀՀ՝ 02247522
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ
Հ/Հ՝ 163048802066
Նախագահ՝
Գրիգորի Երիցյան

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 5
20 թ. _____ ____ -ին
կնքված N ԴՏՊ-11005/ՇՕ պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » *20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված ----- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
ք. Երևան Կառավարական տուն 3	ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-րդ փողոց
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 02247522
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ
Հ/Հ՝ 900011030690	Հ/Հ՝ 163048802066
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Ս. Մուրադյան	Գրիգորի Երիցյան
_____	_____
(ստորագրություն)	/ստորագրություն/

Հավելված 6
20 թ. _____ ____ -ին
կնքված N ԴՏՊ-11005/ՇՕ պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԾՐԱԳԻՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
		ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի N 71-Ա/1 հրամանով (այսուհետ՝ Հրաման) ստեղծված սոցիալական շտապօգնության համա-կարգի (այսուհետ՝ ՍՇՕՀ) նախնական գործարկումն է: ՍՇՕՀ-ի նպատակն արագ արձագանքն է արտակարգ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին, այսու-հետ՝ շահառու) սոցիալական առաջնային կարիքների բավարարման հարցում:	1) ներդնում է պահեստներում (այսուհետ՝ ՍՇՕՀ հենակետեր) հավաքագրված ապրանքատեսականու (մթերքի) հաշվառման համակարգը և դրա վերահսկման մեխանիզմները 2) ապահովում է հենակետ մուտքագրված ապրանքների հաշվառման մատյան (էլեկտրոնային), դրանց մուքի-ելքի առանձին արձանագրման մեխանիզմներ 3) ձևավորում է ՍՇՕՀ հենակետերի և դրանց սպասարկման տարածքների միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՏԿ), տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության մեխանիզմներ 4) կազմակերպում է Հրամանով	1) հանրապետությունում առնվազն ՍՇՕՀ 1 հենակետի առկայություն 2) առևտրային կամ այլ կազմակեր-պությունների (բարերարների, ոլորտային ՀԿ-ների) հետ 2021 թվականի ընթացքում առնվազն 1 հուշագրի կամ համաձայնագրի առկայություն 3) ՍՇՕՀ հենակետերի և այդ հենակետերում հավաքագրված ապրանքների (մթերքի) պահպանման անվտանգության	31.12.2021թ.		

		Դրա համար պահեստներում հավաքագրվում է անհրաժեշտ ապրանքա-տեսականին (մթերքը), պահեստավորվում և բաշխվում սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին/ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում՝ 2.5 ամսում, անհրա-ժեշտ է աջակցություն տրամադրել առնվազն 53 ընտանիքի/: Աշխատանքներն իրականացվում են՝ օգտագործելով ՍՇՕՀ տեղեկատվական հարթակը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նախարարության պատասխանատու ստորաբաժանման կամ միասնական սոցիալական ծառայության կամ դրա տարածքային կենտրոնների հետ համագործակցության արդյունքում փոխանակված տեղեկատվությունը:	սահմանված ակցիաները, 5) բանակցում է առևտրային կազմակերպությունների, այլ բարերարների, կամավորների հետ ֆոնդերի հայթայթման նպատակով, ձևավորում համագործակցության մեխանիզմներ՝ 6) ապահովում է ՍՇՕՀ հենակետերում հավաքագրված ապրանքատեսականու (մթերքի) տրամադրումը սոցիալապես անապահով, դրա կարիքն ունեցող ընտանիքներին՝ ՍՇՕՀ տեղեկատվական հարթակով ստացված տեղեկատվության կամ նախարարության պատասխանատու ստորաբաժանման կամ միասնական սոցիալական ծառայության կամ ՏԿ-ների տրամադրած հայտի հիման վրա 7) իրականացնում և կազմակերպում է իրազեկման աշխատանքներ ՍՇՕՀ համակարգի գործառնության, ակցիաների կազմակերպման, կամավորների հավաքագրման, դրանց արդյունքների հարցերով՝ ապահովելով ՍՇՕՀ-ի գործառնության թափանցիկությունը. 8) իր լիազորությունների շրջանակներում շահագործում է ՍՇՕՀ տեղեկատվական հարթակը	կանոններ (պիտանելիության ժամկետ և այլն) 4) Ծրագրի իրականացում առնվազն Երևան քաղաքի ողջ տարածքում և 1 մարզում. 5) համագործակցություն ծրագրի իրականացման տարածքների ՏԿ-ների հետ 6) համագործակցություն ծրագրի իրականացման տարածքի համայնքների հետ 7) իրազեկման առնվազն 1 թողարկում 8) առնվազն 1 ակցիայի կազմակերպում 9) ներկայացված առաջար-կություններ՝ ՍՇՕՀ բարելավման կամ Հրամանի փոփոխության մասին:			

			9) համագործակցում է նախարարության պատասխանատու ստորաբաժանման, միասնական սոցիալական ծառայության և ՏԿ-ների հետ 10) ապահովում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների անվերապահ կատարումը 11) աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների լուծման, իրավական դաշտի, ինչպես նաև տեղեկատվական հարթակի բարելավման առաջարկություններ է ներկայացնում նախարարություն:				
	Ընդամենը						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարություն
ք. Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011030690
Գլխավոր քարտուղար՝
Ս. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ
ՀՀ. ք Երևան Վերին Շենգավիթ 10-րդ փողոց
ՀՎՀՀ՝ 02247522
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ, Սպանդարյան մ/ճ
Հ/Հ՝ 163048802066
Նախագահ՝
Գրիգորի Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ.